ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

16 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

16 ապրիլի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Հերմոն Ավետիսյանը, Գարիկ Համբարձումյանը, Սոֆիա Ոսկանյանը, Ռոբերտ Դերմոյանը, Արմեն Եփրեմյանը, Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Սոկրատ Հովսեփյանը, Արմեն Մարգարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Հրայր Հակոբջանյան, Խորեն Ուստյան, Ատոմ Ատոմյան, Գոհար Հովսեփյան, Մերի Մելիքյան, Անահիտ Խաչատրյան, Արփինե Դավթյան, Արսեն Եփրեմյան, Ռուբեն Ավետիսյան, Նարեկ Գալստյան, Խորեն Հովակիմյան, Ատոմ Թադևոսյան, Ահարոն Հակոբյան, Հրանտ Սարգսյան, Սերժիկ Բաբայան, Արմեն Ալեքսանյան, Անուշավան Ավետիսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գոռ Նազարյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2025 թվականի ապրիլի 16-ի երրորդ հերթական նիստի օրակարգը՝

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 393-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՓՈԽԱՐԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.6. «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.7. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 290-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.8. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.9. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.10. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.11 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԵՌՆԱՏԱՐ/ԿՈՂԱՎՈՐ/ GAZ-52-04 ՄԵՔԵՆԱՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.12.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԵՌՆԱՏԱՐ/ԻՆՔՆԱԹԱՓ/ GAZ SAZ-538 ՄԵՔԵՆԱՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.13. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԹՎՈՎ 31 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.14. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԳԱԶ AR65R33-60 ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԸ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.15. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.16. ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ECO ENERGY INVEST» (EEI) ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՓԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ/

1.17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՐԲԱՆՑՔ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՓԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ/

1.18. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՌԿԱ՝ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽԻՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՐԹԵՑՄԱՆ ԵՎ ԽՃԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԽՃԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.19. «ԱՐՏ ՍԱՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ԱՐՏ ՍԱՆԴ» ՏԵՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.20. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԻ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ 43/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,084 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.21. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԱՅԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԻՇԽԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂՈՂ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԷԼԻՆԱ ԶԻՐՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.26.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 337-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 70-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի և Արտաշատի համանքապետարանի միջև 2025 թվականի ապրիլի 7-ին կնքված կապիտալ սուբվենցիայի տրամադրման թիվ 1 պայմանագիրը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

1) 38.01.00 գործառական դասակարգման / պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ /900415151373 գանձապետական ծախսային հաշիվն ավելացնել 237 798 700 / երկու հարյուր երեսունյոթ միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր / ՀՀ դրամով.

2) 11.01.02.51 գործառական դասակարգման / վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հոդվածը պակասեցնել 10 500 000/տասը միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով.

3) 08.02.05.52 գործառական դասակարգման / թատերական ներկայացումներ/ 4637 հոդվածն ավելացնել 500 000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով.

4) 04.05.01.59 գործառական դասակարգման /փողոցների պահպանում և շահագործում / 4251 հոդվածն ավելացնել 10 000 000/տասը միլիոն/ ՀՀ դրամով.

5)06.06.01.54 գործառական դասակարգման/բազմաբնակարան բնակելի շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ/ 5241 հոդվածը պակասեցնել 90 000 000/ իննսուն միլիոն / ՀՀ դրամով.

6) 08.01.01.52 գործառական դասակարգման / հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում/ 5112 հոդվածն ավելացնել 42 000 000/ քառասուներկու միլիոն / ՀՀ դրամով.

7)05.06.01.55 գործառական դասակարգման /թափառող կենդանիների վնասազերծում / 4239 հոդվածը պակասեցնել 10 000 000/ տասը միլիոն /ՀՀ դրամով.

8)09.06.01.51 գործառական դասակարգման / նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում/ 4269 հոդվածն ավելացնել 10 000 000/տասը միլիոն /ՀՀ դրամով.

9)09.06.01.51 գործառական դասակարգման /նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում/ 5112 հոդվածն ավելացնել 285 798 700 / երկու հարյուր ութսունհինգ միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր / ՀՀ դրամով:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 392-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 71-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 393-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու կարգը սահմանելու մասին» N 393-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով, և 3-րդ կետը լրացնել նոր 3-րդ և 4-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների

ընտանիքի անդամներին՝ 100 տոկոսի չափով՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը, իսկ եթե անձն ամուսնացած չի եղել կամ չունի (չի ունեցել) զավակներ՝ մինչև հարկման օբյեկտի նկատմամբ ընտանիքի անդամի սեփականության իրավունքի դադարելը,

4) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով հաշմանդամություն ունեցող անձանց(կամ նրանց ընտանիքի անդամներին)՝ ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց 100 տոկոսի չափով, ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց 75 տոկոսի չափով և ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց 50 տոկոսի չափով, որոնք անշարժ գույքը և(կամ) փոխադրամիջոցը ձեռք են բերել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը:»:

2) հավելվածի 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Սույն կարգի 3-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի իմաստով ընտանիքի անդամներ են հանդիսանում ամուսինները, ծնողները և զավակները (որդեգրողները և որդեգրվածները), ինչպես նաև քույրերը և եղբայրները, եթե վերջիններս սույն կարգի 3-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալու (հաստատման) օրվա դրությամբ փաստացի բնակվել են նույն հասցեում և ամուսնացած չեն եղել:»:

3) հավելվածի 12-րդ կետից հետո լրացնել նոր 13-րդ, 14-րդ, 15-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«13. Անշարժ գույքի հարկով և (կամ) փոխադրամիջոցի գույքահարկով հարկվող բնակելի նշանակության մեկից ավելի շինությունների և (կամ) մեկից ավել փոխադրամիջոցների առկայության դեպքում, արտոնությունը կիրառվում է այդ շինություններից և (կամ) փոխադրամիջոցներից մեկի նկատմամբ՝ ըստ անշարժ գույքի հարկի և (կամ) փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն ստացող անձի ցանկության:

14. Արտաշատ համայնքի ավագանին սույն կարգով սահմանված ընդունում է որոշում հարկ վճարողի համար անշարժ գույքի հարկի և (կամ) փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու և հարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին:

15. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի հարկի և (կամ) փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններից գրավոր հրաժարվելու դեպքում արտոնությունը համարվում է չսահմանված՝ տվյալ դիմողի մասով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՓՈԽԱՐԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով և 245-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 393-Ն որոշումը և հաշվի առնելով Արտաշատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Սույն որոշման 2-րդ կետում նշված անձանց Արտաշատ համայնքում սեփականության իրավունքով պատկանող և անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով 2025 թվականի համար հաշվարկված հարկային պարտավորությունների վճարումից 937 521 (ինը հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի և դրանց մասով անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցի գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

2. Սույն որոշմամբ սահմանված արտոնությունները կիրառվում են հետևյալ քաղաքացիների խմբերի նկատմամբ.

1) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով հաշմանդամություն ունեցող անձանց(կամ նրանց ընտանիքի անդամներին)՝ ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց 100 տոկոսի չափով, ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց 75 տոկոսի չափով և ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց 50 տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրել աղբահանության վճարի դրույքաչափի նկատմամբ արտոնություն:

2. Կազմակերպությունների հետ կնքել աղբահանության ծառայությունների մատուցման անհատույց պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Ե.Մխիթարյանի 10 փետրվարի 2025 թվականի թիվ Տ-1718 գրությունը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.53 գործառնական դասակարգման (հասարակական կազմակերպություններին աջակցություն) 4819 հոդվածից (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության անունով «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում
բացված 217001061738001 հաշվեհամարին փոխանցել 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ՝ Արտաշատ քաղաքի տարեցների և հաշմանդամների առաջնային սոցիալական խնդիրները լուծելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 290-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 13-ի ««ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 290-Ա որոշմամբ հաստատված հավելվածում /այսուհետ հավելված/ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) Հավելվածի 3-րդ կետի «Շահումյան 18 Ա» բառը և թիվը փոխարինել «Ս. Շահումյան 18/1» բառով և թվով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 11-րդ հավելվածում 22-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունները՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և Գեղամ Հովհաննեսի Մնացականյանի միջև 18.03.2025 թվականին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-1» ծածկագրով պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ պայմանավորված (Բեռնատար/ինքնաթափ/ GAZ SAZ-538՝ 1 հատ, միավորի գինը՝ 2.900.000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 11-րդ հավելվածում 23-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և Գառնիկ Վլադիմիրի Վարդամյանի միջև 18.03.2025 թվականին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/10» ծածկագրով պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ պայմանավորված (Բեռնատար/կողավոր/ GAZ-52-04, 1 հատ, միավորի գինը՝ 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, համաձայն սույն որոշման հավելվածի.

3.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 11-րդ հավելվածում 24-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և «ՄՈՒԼՏԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի միջև 25.03.2025 թվականին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/25-1» ծածկագրով պայմանագրի համաձայն գույքի ձեռքբերմամբ պայմանավորված (ԳԱԶ AR65R33-60, 2 հատ, միավորի գինը՝ 14.700.000 (տասնչորս միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, համաձայն սույն որոշման հավելվածի.

4 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 12-րդ հավելվածում 1022-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագրի «Կանանց առաջնորդության դպրոց»-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մեկ Projector Wanbo T2/Free with light blub/Տեսացրիչ Wanbo T2/Free լուսային լամպով տեսացրիչը ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանին փոխանցմամբ պայմանավորված՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 10-ի <<ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 135-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) Հավելվածի 2.4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.5-ին կետով՝ «2.5. Կազմակերպությունը կարող է իրականացնել համայնքի կարիքների համար նախատեսված այլ գործունեություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 80-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԵՌՆԱՏԱՐ/ԿՈՂԱՎՈՐ/ GAZ-52-04 ՄԵՔԵՆԱՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Բեռնատար/կողավոր/ GAZ-52-04 մեքենան անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Արտաշատ համայնքի «Արտաշատ-Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ

համայնքում իր իրավասությունների շրջանակներում ծառայություններ մատուցելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 81-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԵՌՆԱՏԱՐ/ԻՆՔՆԱԹԱՓ/ GAZ SAZ-538 ՄԵՔԵՆԱՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Բեռնատար/ինքնաթափ/ GAZ SAZ-538 մեքենան անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ համայնքում իր իրավասությունների շրջանակներում ծառայություններ մատուցելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 82-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԹՎՈՎ 31 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 1-ին, 2-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի 07.04.2025 թվականի թիվ Պ-4551 գրությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանին

պատկանող տրանսպորտային միջոցների շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել դասական աճուրդային կարգով օտարելու Արտաշատ համայնքի հաշվեկշռում հաշվառված թվով 31 տրանսպորտային միջոցները(այսուհետ՝ գույք)՝ համաձայն հավելվածի:

2.Աճուրդով օտարման ենթակա գույքի վաճառքի նվազագույն մեկնարկային գինը սահմանել գույքի գնահատված շուկայական արժեքի 100 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի:

3.Աճուրդին մասնակցելու նախավճար սահմանել գույքի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, աճուրդի հաղթողի կողմից վճարած նախավճարը հաշվարկել որպես գույքի վաճառքի գնի մաս:

4.Սահմանել աճուրդին մասնակցության վճար՝ 15000 << դրամ և մասնակցության տոմսի համար՝ 1000 << դրամ, որոնք չեն ներառվում գույքի վաճառքի գնի մեջ ենթակա չեն վերադարձման:

5.Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը չստորագրելու կամ հետագա վճարումները չկատարելու կամ պայմանագիր չկնքելու դեպքերում աճուրդը համարվում է չկայացած, որի դեպքում նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքային բյուջե:

6.Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպել նոր աճուրդներ՝ յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան գույքի գնահատված շուկայական արժեքի 50 տոկոսը:

7.Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը չստորագրելու կամ հետագա վճարումները չկատարելու կամ պայմանագիր չկնքելու դեպքերում աճուրդը չկայացած համարվելու կամ դատական կարգով անվավեր ճանաչվելու ժամանակ կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

8.Արձանագրության ստորագրման պահից հաղթողին են անցնում համապատասխան լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը և վերջինս պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի պետական հաշվառման հետ կապված << օրենսդրությամբ սահմանված գումարները:

9.Աճուրդը(աճուրդները) կազմակերպել սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո տասնութ ամսվա ընթացքում:

10.Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կատարել յուրաքանչյուր աճուրդի բացումից առնվազն տասնհինգ օր առաջ:

11.Գույքի առաջին աճուրդը կազմակերպել և անցկացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

12.Աճուրդը չկայացած հայտարարվելու դեպքում դրա մասին կազմված արձանագրությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է համայնքապետարանի պաշտոնական կայքում:

13.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 83-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԳԱԶ AR65R33-60 ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԸ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող թվով երկու ԳԱԶ AR65R33-60 ավտոբուսները անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ համայնքում իր իրավասությունների շրջանակներում ծառայություններ մատուցելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 84-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխով սահմանված դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Արտաշատ համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ս.Մկրտչյանի՝ 01.04.2025 թվականի և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի՝ 14.04.2025 թվականի գրությունները, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. 2009 թվականի հունիսի 9-ին Արտաշատ համայնքի և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի միջև կնքված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման» պայմանագրում /այսուհետ՝ պայմանագիր/ թույլատրել կատարել հետևյալ փոփոխությունը.

1) պայմանագրի 1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Փոխատուն Փոխառուին ժամանակավոր, անհատույց օգտագործման է հանձնում հետևյալ գույքը՝ Արտաշատ քաղաքի Օրբելի փողոցի թիվ 100 հասցեում գտնվող, թիվ 2378617 վկայականով, 0,738 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասից և 986,2/1259,3 քմ մակերեսով շենք-շինություններից համաձայն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հատակագծի՝ 0,5132 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և 812,62/1006,73 քմ շինությունը»:

3. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 85-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ECO ENERGY INVEST» (EEI) ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՓԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Արտաշատի համայնքապետարանի և «Eco Energy Invest» (EEI) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /ՀՎՀՀ՝ 02277805, ՀՀ ք.Երևան, Արշակունյաց պողոտա 52/3, բն.50/ միջև «էլեկտրաէներգիայի արտադրությամբ ԿԿԹ-ների (կենցաղային կոշտ թափոններ) վերամշակման և էներգիայի օգտագործման համար էկոտեխնիկայի կառուցման տեխնոլոգիաների նախագծման և մատակարարման մասին» մտադրությունների մասին համաձայնագիր կնքելուն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 86-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՐԲԱՆՑՔ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՓԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածով և «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 2-րդ հավելվածի 2.2-րդ բաժնի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը, Դվին բնակավայրի վարչական ղեկավար Ա.Ավետիսյանի 07.04.2025 թվականի գրությունը և 10.04.2025 թվականին անցկացված հանրային լսման արձանագրությունը, հաշվի առնելով Արտաշատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Դվին բնակավայրի Զորավար Անդրանիկի փողոցին հարակից նրբանցքն անվանակոչել Ազգային հերոս Զորավար Անդրանիկի անվամբ՝ «Զորավար Անդրանիկի փողոց 1-ին նրբանցք»:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 87-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՌԿԱ՝ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽԻՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՐԹԵՑՄԱՆ ԵՎ ԽՃԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԽՃԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ընդերքի մասին» օրենքի 48-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 152-Ն որոշման դրույթները, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարաի տեղակալի N ԱՎ/26.1/11165-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Արտաշատ համայնքի Նարեկ բնակավայրի՝ 03-063-0132-0011 կադաստրային ծածկագրով 1,0561 հա (ըստ համապատասխան որակավորում

ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից (գյուղատնտեսական նշանակության՝ արոտավայր) սեփական կարիքների համար՝ բնակավայրերում առկա՝ բարեկարգման խիստ անհրաժեշտություն պահանջող (գյուղտեխնիկաների, գյուղացիական տնտեսություններին պատկանող ավտոմեքենաների և բերքահավաքի ժամանակ մթերում իրականացնող ավտոմեքենաների համար դժվարանցանելի) դաշտամիջյան ճանապարհների և բնակավայրերի՝ անմխիթար վիճակում գտնվող փողոցների հարթեցման և խճապատման աշխատանքների իրականացման նպատակով Արտաշատի համայնքապետարանի կողմից 2025-2026թթ. ընթացքում մոտ 18000 խմ խճային զանգվածի արդյունահանմանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 88-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԱՐՏ ՍԱՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ԱՐՏ ՍԱՆԴ» ՏԵՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «ԱՐՏ ՍԱՆԴ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հայրապետյանի դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տրամադրել նախնական համաձայնություն «ԱՐՏ ՍԱՆԴ» կողմից ՀՀ Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ԱՐՏ ՍԱՆԴ» տեղամասի սահմաններում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու աշխատանքների իրականացմանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 89-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԻ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ 43/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,084 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և հիմք ընդունելով Արարատի մարզպետի 2025 թվականի մարտի 28-ի N 01//09197-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Դիմիտրով գյուղի, Մայակովսկու փողոց 43/2 հասցեում գտնվող՝ 03-038-0016-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,084 հա մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ առողջության առաջնային պահպանման բժշկական կենտրոն կառուցելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 90-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Հովտաշեն գյուղի Պ.Սևակի փողոց 24/3 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտնե րի հողամասն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 67-Ա որոշման 1-ին կետում «03-055-0022-0009» թվերը փոխարինել «03-055-0022-0018» թվերով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 91-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2025 թվականի մարտի 28-ի N 1 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2025 թվականի ապրիլի 08-ի N 01//02379-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Հովտաշեն գյուղում համայնքային սեփականություն հանդիսացող 03-055-0111-0004 ծածկագրով հողամասից 4.95167 հա գյուղատնտեսական վարելահողի, 03-055-0111-0007 ծածկագրով հողամասից 0,012628 հա գյուղատնտեսական այլ հողատեսքի, 03-055-0111-0008 ծածկագրով հողամասից 0,08191 հա գյուղատնտեսական այլ հողատեսք հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 92-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԱՅԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով Ա.Գրիգորյանի լ/ա Գ.Կնյազյանի 03/04/2025 թվականի N ՃՀԱ/235/12403-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքաում գտնվող, Արայիկ Հայրապետի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 2,78038հա մակերեսով, 03-001-0601-0026 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողատեսքը՝ վարելահող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսության կառուցելու նպատակով:

2.Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 93-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԻՇԽԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով Ի.Հակոբյանի 13/03/2025 թվականի N ՃՀԱ/235/9378-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում գտնվող, Իշխան Աշոտի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 0,4162հա մակերեսով, 03-001-0701-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողատեսքը՝ խաղող հողամասից՝ ըստ հատակագծի 0,0735,5հա հատվածի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի,

իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնագոմ կառուցելու նպատակով:

2.Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 94-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԷԼԻՆԱ ԶԻՐՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով է. Զիրոյանի 21/03/2025 թվականի N ՃՀԱ/234/10668-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արաքսավան գյուղում գտնվող, Էլինա Սարիբեկի Զիրոյանին սեփականության իրավունքով պատկանող 0,39229հա մակերեսով, 03-016-0138-0012 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողատեսքը՝ վարելահող հողամասից՝ ըստ հատակագծի 0,0573 հա հատվածի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսության կառուցելու նպատակով:

2.Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 95-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 337-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, հիմքը ընդունելով Գ.Միրոյանի 16/04/2025 թվականի ՃՀԱ/225/14039-25 հայտը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 13-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՂՁՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԵՎՈՐԳ ԱՐԱՅԻԿԻ ՄԻՐՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» /այսուհետ՝ որոշում/ N 337-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1) որոշման վերնագրում և 1-ին կետում «1հա» թիվը և բառը փոխարինել «1,03007հա» թվով և բառով:

1.2) որոշման 1-ին կետում «03-037-0501-0004» թվերը փոխարինել «03-037-0501-0006» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 96-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի չորրորդ հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի մայիսի 14-ին, ժամը 11:00-ին:

2.Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում, հասցեն ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 62:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 97-Ա)*

Ավագանու անդամներ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԻ ԱՋԱՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԱՇԻԿՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գոռ Նազարյանը